ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1830-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲԵԼԳԻԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ*

Ֆելիքս Մովսիսյան

Բանալի բառեր՝ անկախություն, պայքար, հաղթանակ, ժամանակավոր կառավարություն, մեծ տերություններ, թագավորություն, Մխիթարյան միաբանություն:

Նապոլեոնյան տիրապետության կործանումը վերջ տվեց Բելգիայում ֆրանսիական գերիշխանությանը, բայց բելգիական ժողովուրդը ցանկալի ազատություն չստացավ: 1815թ. Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտով Հյուսիսային ու Հարավային Նիդեռլանդները, Լյուքսեմբուրգի մեծ դքսությունը և Լյեժի եպիսկոպոսատը, առանց այնտեղ ապրող ժողովուրդների ցանկությունը հաշվի առնելու, բռնի միավորվեցին և ձևավորվեց Միացյալ Նիդերլանդական թագավորություն: Թագավոր հռչակվեց Լյուքսեմբուրգի առաջին դուքս, Նասսաու-Օրանյան արքայատոհմի ներկայացուցիչ, արքայազն Վիլլեմը (1772/1815-1843): Նրա գլխավորած նոր պետությունում տնտեսապես զարգացած 4 մլն. բնակչություն ունեցող Հարավային նահանգները (Բելգիա) վարչական, տնտեսական, քաղաքական և կրոնական կախվածության մեջ ընկան 2 մլն. Բնակչությամբ՝ համեմատաբար թույլ տնտեսություն ունեցող Հյուսիսային Նահանգներից (Հոլանդիա): Միացյալ թագավորության 15 տարիների ընթացքում բելգիացիների տնտեսական և քաղաքական-կրոնական շահերի մշտական ոտնահարումը հանգեցրեց նրանց ազգային-ազատագրական պայքարի սկզբնավորմանը: 1830թ. հուլիսին Ֆրանսիայում բռնկված հեղափոխության լուրը բելգիական գավառներում ընդունվեց մեծագույն խանդավառությամբ՝ բացելով ազատության հեռանկարներ: Բելգիական ազատագրական պայքարն իր վրա հրավիրեց եվրոպական մեծ տերությունների, հասարակության առաջադեմ խավերի ու ժամանակի մամուլի ուշադրությունը:

Հայ հասարակական միտքը բելգիական ազատագրական պայքարին անմիջականորեն չի անդրադարձել ամենից առաջ այն պատճառով, որ պայքարի տարիներին՝ 1830-ական թվականներին, հայ պարբերականներ լույս չէին տեսնում: 1820թ. Վենետիկի Մխիթարյանների՝ «Եղանակ Բյուզանդյան» պարբերականի հրատարակության ընդհատումից հետո, 20 տարի շարունակ հայ լրագրական աշխարհում լռություն տիրեց: 1832թ. Կ. Պոլսում լույս տեսած «Լրո գիրը» թուրքերեն «Թագվիմի վագայի» թերթի հայերեն հրատարակությունն էր, ինքնին «անոճ, անհամ, ցամաք և որևէ հատկությունից զուրկ» մի թերթ: Բացի Կ.Պոլսի «հայ լրագրութեան անդրանիկ և ազգային առաջին շաբաթաթերթն ըլլալու պատահական պատուեն՝ ուրիշ առաւելութիւն մը չը ցուցըներ»[1]: «Լրո գիրը» ամբողջովին արտահայտում էր Օսմանյան կայսրության շահերը, ազգային-ազատագրական շարժումները չէր դրվատում, ուստի բելգիական ազգային պայքարին չի արձագանքել:

1840-ական թվականներին լույս տեսած հայ պարբերականները բավական ակտիվ լուսաբանեցին եվրոպական հեղափոխություններն ու ազգային-ազատագրական շարժումը: 1850-1870-ական թվականներին բելգիական ազատագրական պայքարին իրենց աշխատություններում անդրադարձան հիմնականում արևմտահայ ազգային-պահպանողականը ներկայացնող Մխիթարյան միաբանության պատմաբանները: Այդ տարիներին Օսմանյան կայսրությունում արևմտահայությունը հասարակական, քաղա-

---

* Հոդվածն ընդունվել է 07.09.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնը: 13.09.21:

քական և ազգային շարժում էր ծավալում, պայքարում էր իր իրավունքների համար: Այդ պարագայում Մխիթարյանների աշխատություններն, անշուշտ, կարող էին նպաստել արևմտահայության ազատասիրության ձևավորմանը: Սակայն Մխիթարյանները որքան էլ իրենց աշխատություններում անդրադառնում էին եվրոպական ազգային-ազատագրական շարժումներին, այնուամենայնիվ, նրանց գաղափարախոսական հայեցակարգը չէր կայանում դրանք դրվատելն ու արևմտահայությանը պայքարի կոչելը: Վիեննայի Մխիթարյանները «խոհական և հեռատես անձիք» էին, որոնցից Պողոս և Ղևոնդ Հովնանյան եղբայրները, Հովսեփ Գաթըրճյանը, Մատաթիա (Անտոն) Գարագաշյանը, Եփրեմ Չագրճյանը, Գրիգոր Գովրիկյանը և ուրիշները «Եվրոպա» քաղաքական շաբաթաթերթի հրապարակումներում և իրենց պատմական ուսումնասիրություններում[2] «եվրոպական ոճով և հմտութեամբ»[3] աշխատում էին «հիմկուան Եւրոպայի խռովութիւնները իրենց բնական՝ աղէկ կամ գեշ գունովը նկատել»[4]: Նրանք հավատարիմ մնացին արևմտահայ ամիրա, Մխիթարյանների հովանավոր Հակոբ Չելեպի Տյուզյանի (1793-1847)՝ իրենց ուղղված հորդորին՝ «ամէն բաներու վրայ խօսի ծանրութեամբ, հանդարտութեամբ, ընտրութեամբ և կարելի եղածին չափ մաքուր ոճով» [5]:

Վենետիկի Մխիթարյանները XIX դարի առաջին կեսի եվրոպական հեղափոխական և ազգային-ազատագրական պայքարի տարիներին, լինելով Ավստրիական կայսրության բռնապետական տիրապետության տակ, և չցականալով հարվածի տակ դնել Մայրավանքի միաբանության գործունեությունը, գերադասեցին «իբրև հանդիսատես ... պատկառելի ու սիրելի մնալ այս հիւրընկալ երկիրներին յեղափոխութեանց մէջ»[6]: Մխիթարյանների «վառվռուն հոգւոյ և ջերմ սրտի տէր գրիչները» եվրոպական ճնշվող ժողովուրդների ազատագրական պայքարի տարիներին պահպանեցին «Ս. Ղազարու վանքի բռնաց ուղղութեանը», որը «միշտ կաշկանդել է իւր հեղինակների գրիչը, միշտ արգելք է եղել նոցա ազատ և բազմակողմանի զարգացմանը և երգելուն»[7]:

Հայ հասարակական մտքում բելգիական ազգային պայքարը լայն արձագանք չգտավ նաև այն պատճառով, որ այն արևմտահայության ազատագրական շարժման հետ ընդհանրություն չուներ, թեպետ այն կարող էր պայքարի ուղենիշ լինել, քանի որ ավարտվեց ինքնուրույն պետության կազմավորումով:

Բելգիական ազգային շարժման սկզբնավորմանը բավականաչափ իրազեկ Ղևոնդ վարդապետ Հովնանյանը (1817-1897) գրում է, որ բելգիական և հոլանդական գավառների ճակատագրի հետ «անձկութեամբ կապուած է բոլոր Եվրոպայի բախտը»: Ժամանակին ֆրանսիացիները Բելգիան գրավելով՝ ճանապարհ բացեցին իրենց «տիեզերական իշխանության» համար: Ֆրանսիական կայսրության կործանումից հետո եվրոպական քաղաքագետները հասկացան, որ «մեծապես հարկավոր է հոնտեղը զորավոր տերութիւն մը կանգնել», որը Պրուսիայի օգնությամբ կարողանա Ֆրանսիայի կողմից հնարավոր «ամեն կերպ հարձակմանց դէմ զինքը պաշտպանել»: Այդ նպատակով Վիեննայի վեհաժողովը որոշեց Բելգիան, Լյուքսեմբուրգի մեծ դքսությունը և Հոլանդիան միավորել միացյալ «զորավոր միապետության» մեջ, որի թագավորի տիտղոսը ստանձնեց վեհապետական իշխան, նախկին ժառանգական կուսակալ Օրանյան արքայատոհմի ներկայացուցիչը: Անգլիան հոգ տարավ, որպեսզի նոր պետության սահմաններն ամրապնդվեն: Այդ ամենի արդյունքում ծագումով, լեզվով և կրոնով իրարից տարբեր երկու ազգեր միացան մեկ պետության մեջ, որի կառավարությունից պահանջվում էր «իր խոհեմ վարմունքով՝ ներքին միութեան պակասութեան տեղը լեցընել և անկից ծագիլ կրցող չարիքները խափանել: Բայց նոր կառավարութիւնն այս իր կոչումը չկրցավ աղեկ կատարել»[8]:

Ղևոնդ վրդ. Հովնանյանը ճիշտ է ներկայացնում Նիդեռլանդական թագավորության կազմավորումը, որը մեծ տերությունների շահավետ քաղաքական գործարքն էր և ընդհանուր ոչինչ չուներ երկու ժողովուրդների հետ[9]: Նա միաժամանակ բացահայտում է նոր պետության արագ կազմալուծման պատճառները: Ղևոնդ վրդ. Հովնանյա-

նի կարծիքով Վիլլեմ I Օրանացին «իր անխոհեմ վերաբերմունքով» պետության մասնատման գլխավոր մեղավորը դարձավ: Նա «ամենևին իրավունք չուներ ոչ թագավորական աստիճանին և ոչ մանավանդ Բելգիայի, ուստի և մեծ տերութիւններէն իբրև պարգև ընդունեցավ, որուն նպատակն էր անոնց կամ Եվրոպայի ընդհանուր շահը»: Այսքանից հետո, փոխանակ «իմաստուն ու հայրական» կառավարմամբ ձգտելու բելգիացիների «սերը վաստակել», Վիլլեմ I-ը «ուզեց բելգացիները հոլանտացնել», որով ամեն տեղ հոլանդացիներին առաջ քաշելով և բելգիացիներին ետ մղելով, երկրի ներսում «բազմաթիվ ու անհաշտ թշնամիներ հարոյց»: Նրա թագավորության 15 տարիների ընթացքում «կառավարութեան դէմ ատելութիւնը խորունկ արմատացած» էր, ուստի ընդդիմադիր ուժերը համախմբվեցին: Ղ. վրդ. Հովնանյանի համոզմամբ՝ սրանից զատ, թագավորի գործը բելգիացիներին կառավարելու հարցում «խիստ դժվար էր» նաև այն առումով, որ երեք հարյուր տարի շարունակ բելգիացիների և հոլանդացիների միջև «կրոնական սկզբանց արտաքո կարգի հակառակություն կար, գրեթե անկարելի էր այս հակառակ տարրերն իրարու հետ հաշտ ու միաբերան պահել»[10]:

Այս իրողությունն ավելի ուշ հաստատում է նաև «Մշակ» թերթի խմբագիր, արևելահայ լիբերալիզմի ականավոր գործիչ Գրիգոր Արծրունին (1845-1892): Նրա կարծիքով կաթոլիկների ու բողոքականների հակամարտությունը 1830թ. Բելգիայում հանգեցրեց «սարսափելի ու արյունահեղ ապստամբության»[11]:

Կրոնական անհանդուժողականությունը համարելով հակամարտության լուրջ պատճառ՝ Ղ. վրդ. Հովնանյանն իրավացիորեն նաև ընդգծում է, որ Վիլլեմ I-ը երկու ազգերի միջև «եղած երկպառակությունը» չպետք է մեծացներ և պետք է զգուշանար «հին ատելությունը նորից բորբոքելուց»: Դրա համար անհրաժեշտ նախապայմաններ կային, քանզի հոլանդացիներին գերակշռող բելգիացիները լավ գիտեին թագավորի և նրա կառավարության «բելգիական տարրը միշտ ավելի ճնշուելով հոլանտականին մեջ կորսուի» մտադրությունը, և «անկարելի էր, որ համբերեին» [12]:

Բելգիացիների և հոլանդացիների փոխհարաբերությունները՝ սկսած 17-18-րդ դարերից, բարդ էին և պայմանավորված էին տնտեսական, քաղաքական, վարչական, մշակութային ու կրոնական հանգամանքներով: Երկու հարյուր տարի շարունակ հյուսիսային և հարավային գավառները զարգանում էին առանձին: Բնակչության մեծամասնություն կազմող բելգիացիները 1815թ. օգոստոսի 15-ի սահմանադրությամբ զրկված էին պետական կառավարման համակարգում ընդգրկվելու հնարավորությունից: Պետական պաշտոնները գբաղեցնում էին բացառապես հոլանդացիներն ու թագավորի մերձավորները: Կառավարությունում ընդամենը մեկ բելգիացի նախարար կար: Նույն վիճակն էր նաև Նոտաբլների ժողովում, բանակում, դատարաններում, որտեղ հոլանդացիները ճնշող մեծամասնություն էին կազմում: 1822թ. պետական լեզու հայտարարվեց հոլանդերենը, առանց որի իմացության պետական պաշտոն հնարավոր չէր գբաղեցնել[13]:

Երկու ժողովուրդների հակամարտության լուրջ պատճառներից մյուսը Ղ. վրդ. Հովնանյանն իրավացիորեն համարում է կրոնականը: Որպես պատմաբան ու կրոնական գործիչ նա քաջատեղյակ էր, որ 200 տարուց ավել բելգիացիների և հոլանդացիների կրոնական տարաձայնությունները չէին հարթվում, հետևաբար՝ «անկարելի է, որ աս հակառակ տարրերն իրարու հետ հաշտ ու միաբան պահել»: Նրա կարծիքով թագավորը երկու ազգերի միջև երկպառակությունն ու ատելությունը մեծացրեց՝ հաշվի չառնելով, որ բնակչության թվով բելգիացիները գերազանցում են հոլանդացիներին: Վիլլեմ I-ի և կառավարության միտքը, գրում է Ղ. վրդ. Հովնանյանը, այն է, որ «բելգիական տարրը միշտ աւելի ճնշուելով՝ հոլանտականին մէջ կորսուի»[14]:

Կրոնական խնդիրը թագավորությունում, իսկապես, լուրջ էր: Կաթոլիկ բելգիացիները դեռևս իսպանական և ավստրիական տիրապետության տարիներից անբարյացակամ վերաբերմունք ունեին կալվինական հոլանդացիների նկատմամբ: Իրենց հեր-

թին հոլանդացիները երկյուղ ունեին, թե նոր թագավորությունում կաթոլիկ եկեղեցին կդառնա գերիշխող: Լուրջ հակասություններ կային տնտեսության ոլորտում: Բելգիացիներն արդյունաբերական հեղաշրջման ճանապարհին էին, իսկ Հոլանդիայում մանուֆակտուրաներն ու արհեստներն անկում էին ապրում: 1821թ. կառավարությունը բարձր հարկեր սահմանեց բելգիացիների կողմից օգտագործվող հիմնական ապրանքների վրա, իսկ նոր մաքսատուրքերը չէին բխում բելգիացի արդյունաբերողների շահերից: Բելգիացիների համար լուրջ խոչընդոտ էր Շելդայի գետաբերանով նավարկելը, որը 144 տարի չէր թույլատրվում: Վիլլեմ I-ի հրամանագրով պետական պարտքը բաժանվեց երկու հավասար մասի, այն դեպքում, երբ բելգիական գավառների պարտքը կազմում էր 26 մլն ֆլորին, իսկ Հոլանդիայի պարտքը՝ 573 մլն ֆլորին[15]: Այս ամենն առաջացրեց բելգիացիների դժգոհությունը, որի կապակցությամբ 1830թ. փետրվարին Բրյուսելում Դանիայի դեսպանը գրում էր. «Ես համոզված եմ, որ այս երկրում իրադարձությունների ընթացքը հանգեցնելու է անարխիայի, եթե չասենք՝ հեղափոխության»[16]:

Ըստ Ղ. վրդ. Հովնանյանի թեպետ՝ բելգիացիները մշտապես բողոքում էին իրավազրկությունից և փորձում էին բարելավել իրենց վիճակը, բայց և այնպես, նրանց բողոքներն առանձնապես արդյունք չտվեցին, քանզի նրանց դիմադրությունը խորհրդարանում և նրանից դուրս «տկար էր»: Բացի այդ, բելգիացիները «մեջերնին միաբան չէին», լուրջ տարաձայնություններ կային լիբերալների ու կաթոլիկականների միջև: Ի վերջո, այս երկու «իրարու հակառակ տարրներե կազմված» խմբավորումները համախմբվեցին, և «զորավոր դիմադրական կողմնակցություն ձևացավ» կառավարության դեմ: Թագավորի արած ամենափոքր զիջումներն անգամ ընդդիմադիրների «քաջալերությունը կավելացներ», որոնք «ավելի կզորանային»[17]:

Ղ. Հովնանյանն իրավացի է. բելգիական գավառներում քաղաքական միասնություն ու համերաշխություն չկար: Միմյանց դեմ մրցակցում էին լիբերալ և կաթոլիկական կուսակցությունները: Լիբերալներն արտահայտում էին արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի շահերը, իսկ կաթոլիկական կուսակցությունը՝ ազնվականության ու հոգևորականության: Լիբերալները պահանջում էին խոսքի և տպագրության ազատություն, իսկ կաթոլիկները՝ խղճի և դասավանդման: Լիբերալ ընդդիմության առաջնորդը հայտնի հրապարակախոս Լուի դե Պոտտերն (1786-1859) էր, ով 1827 թ. դարձավ կաթոլիկության թունդ հակառակորդ: Բայց 1828թ. նա կաթոլիկների հետ դաշինք կնքեց և համատեղ ուժերով կառավարությունից պահանջեցին սահմանադրական ազատություններ շնորհել: Կառավարությանը խիստ քննադատելու համար 1828թ. դեկտեմբերին դատարանը նրան 18 ամսյա բանտարկության դատապարտեց[18]:

Բելգիական քաղաքական կուսակցությունների ծրագրերին ծանոթ Ղ. վրդ. Հովնանյանը նրանց համախմբումը համարում է «անբնական միաբանութիւն», որ երկու ուժի համար «գործնական շահ ունեցավ»: Բելգիացիները, կառավարությունից տուժելով, սկսեցին ֆրանսիական «իշխանութեան բաղձալ»: Թագավորը 1827 թ. Հռոմի պապի հետ կրոնական դաշինք կնքեց, որով «պզտիկ կղերանոցները» պետության հսկողությունից դուրս եկան և հանձնվեցին եկեղեցականներին: Ըստ Ղ. վրդ. Հովնանյանի, այս փոքրիկ զիջումը ընդդիմադիրներին քաջալերեց, որոնք գնալով ավելի կազմակերպված դարձան և ուժեղացան:

Պատմելով ընդդիմադիրների օրեցօր հզորանալու, Բրյուսելը ֆրանսիական «մերժված հանրապետականների» հավաքատեղի և «բովանդակ Եվրոպայի դժգոհներուն կրակետեղը» դառնալու մասին՝ Ղ. վրդ. Հովնանյանը միաժամանակ ներկայացնում է ընդդիմության պահանջները: Նրանք իշխանությունների առաջ խնդիր էին դնում ապահովել բելգիացիների և հոլանդացիների իրավահավասարությունը գործադիր և օրենսդիր մարմիններում, ինչպես նաև՝ «կրոնական դաշանց ճշտիվ կատարուիլը, մամ-

լո ազատություն, պաշտոնեից պատասխանատվություն և ուրիշ ասոնց նման ազատություններ» [19]:

Ղևոնդ վրդ. Հովնանյանը նկատի ունի 1829թ. մարտին բելգիական գավառներում հանրագրային շարժում ծավալելը, որը թագավորին ու կառավարությանը լուրջ անհանգստություն պատճառեց[20]: Հանրագրերի տակ ստորագրեցին 360 հազար բելգիացիներ: Ղ. վրդ. Հովնանյանի պատմելով, 1829թ. Բելգիայում ճանապարհորդելիս՝ բելգիացիները թագավորին հավատացրին, որ իրենց դժգոհությունը կառավարության դեմ է ու նրան արտաքուստ պատիվներով ու ուրախության նշաններով ընդունեցին: Այդ ընդունելությունից Վիլլեմ I-ի մոտ թյուր կարծիք ստեղծվեց, թե իր դեմ ընդդիմությունը «սակավաթիվ անձինքներու գործքն է և ժողովրդեան մեծ մասն իր կողմն է»: Նա Լյուդդիխում հրապարակավ նախատեց այդ խումբ մարդկանց, ովքեր իրենց անձնական շահը փորձում են հասարակության բաղձանքից բարձր դասել: Թագավորը նրանց ելույթները որակեց «ամոթալի բան, անպատիվ վարմունք», որը վատ ազդեցություն թողեց: Թվացյալ հաջողությունից ոգևորված թագավորը 1829 թ. հոկտեմբերին հրավիրված խորհրդարանում «իր սխալ ըմբռնման համեմատ բելգիացվոց դեմ մեծ խստութեամբ վարվելու սկսավ»: Դրանից երկրում գրգռությունը գնալով սաստկացավ ու մի շարք վայրերում «շփոթությունք պատահեցան»: Բայց կառավարությունը հաստատուն մնաց, որից ընդդիմադիրները հոգնեցին, իսկ 1830 թ. հունիսի 2-ին՝ խորհրդարանի փակվելուց հետո, բելգիացիները «բարոյապես հաղթված կերևային»: Այսպիսի վիճակում էր Բելգիան, ըստ Ղ. վրդ. Հովնանյանի, երբ Ֆիանսիայում 1830թ. հուլիսին «հեղափոխութիւնը փոթելով, դիմադրականաց ակնկալութիւնները կենդանացուց» [21]:

Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր, պատմաբան Գրիգոր Գովրիկյանը (1840-1931) նույնպես ընդգծում է 1830թ. հուլիսյան իրադարձությունների ազդեցությունը բելգիացիների վրա: Նրա բնութագրմամբ՝ 1830թ. օգոստոսի 26-ին, Բրյուսելում «հեղափոխութիւն մ' ելավ, որ Ստորին գավառաց հարավ, ուղղափառ մասին վրայ շուտ տարածուեցավ»[22]:

Վենետիկի Մխիթարյաններից պատմական մի շարք ուսումնասիրությունների հեղինակ Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանի (1831-1906) կարծիքով՝ 1830թ. հուլիսին Ֆրանսիայում «հասարակապետութիւն հաստատուելուն պէս բոլոր Եւրոպա շարժուեցաւ ու շատ ժողովուրդներ ոտք ելան՝ այդ թվում բելգիացիները»[23]:

Արեմտահայ դեմոկրատ գործիչ, հրապարակախոս և գրող Մատթեոս Մամուրյանը (1830-1901) «Անկլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը» հրապարակախոսական երկում 1830թ. Եվրոպայում ստեղծված իրավիճակը համեմատում է հրաբխի հետ, որը «ներսեն կբորբոքեր, կեռար և ընդհանուր ցնցում մը, պայթում մը կդառնար»: Անկախության համար ոտքի ելած ժողովուրդների թվում նա հիշատակում է նաև բելգիացիներին, որոնք «Հոլանդիայի դեմ կընդվզեին և անկախ իշխանություն մը ձեռք ձգտելու կնկրտեին»[24]:

Ղ. վրդ. Հովնանյանն իրավացիորեն գրում է, որ լիբերալների և կաթոլիկաննե-րի միության առաջնորդ Լուի դը Պոտտերը, ով տեղի ունեցած «շփոթութիւններուն պատճառաւ աքսորված էր», թագավորին խրատում էր բելգիացիների պահանջները կատարել և վերահաս «հեղափոխութեան մը սկսելուն առջև առնու»: Թագավորը նրան չպատասխանեց՝ հավանաբար վախ չցուցաբերելուց խուսափելու համար[25]: Ղևոնդ վրդ. Հովնանյանը նկատի ունի Լուի դը Պոտտերի՝ 1829 թ. վերջին թագավորին հղած նամակը, որտեղ հեղափոխության մասին խոսք չկար: Նա թագավորին գրում էր. «Ձեր պալատականներն ու նախարարները, ձեր շողոքորթներն ու խորհրդականները խաբում են ձեզ ... կառավարության յուրացրած համակարգը նրան անդառնալիորեն կկործանի, և մենք զգում ենք վերահաս աղետի վտանգը, որից խուսափել չափազանց ուշ կլինի, եթե ճակատագրական ժամը հնչի»[26]:

Ըստ Ղ. վրդ. Հովնանյանի՝ Ֆրանսիական հեղափոխությունից հետո Փարիզից մարդիկ գնացին Բրյուսել՝ «յեղափոխութիւն հանելու համար»: Բելգիացիները որոշեցին 1830թ. օգոստոսի 25-ին՝ թագավորի ծննդյան տարեդարձի և նրա աղջկա հարսանյաց հանդեսի կայացման օրը, «յեղափոխութիւն հանելու գործածիլ»: Այդ նպատակով Բրյուսելում շենքերի պատերին հայտարարություններ փակցրեցին: Կառավարությունն արգելեց այդ բոլոր հանդիսությունները, բայց թույլատրեց Բրյուսելի թատրոնում «Պորտիչի համը» ներկայացումը, որի «նյութը՝ հաջողված յեղափոխութիւն ըլլալով, յեղափոխական կիրքերը գրգռելու միակ միջոցն էր»: Ներկայացումից ոգևորված ժողովուրդը հարձակվեց ոստիկանապետի, արդարադատության նախարարի տների, գինու շտեմարանի և տպարանի վրա ու դրանք «ավրեց, կողոպտեց, խորտակեց, կործանեց»: Օգոստոսի 26-ին «սաստիկ ընդհարում» տեղի ունեցավ թագավորական զորքի հետ, իսկ խորհրդարանի շենքի վրա բարձրացվեց բելգիական՝ կարմիր, նարնջագույն, սև եռագույն դրոշը՝ «իբրև անկախութեան նշան»[27]:

Ղ. վրդ. Հովնանյանը հավաստի է ներկայացնում օգոստոսի 25-ի իրադարձությունները Բրյուսելում, որտեղ երեկոյան ընթանում էր ֆրանսիացի կոմպոզիտոր Դանիել Օբերի՝ «Մազանյելլո կամ համը Պորտիչից» օպերան: Օպերայի սյուժեն պատմական հավաստի իրադարձություն էր՝ 1647 թ. Նեապոլում իսպանական տիրապետության դեմ Մազանյելլոյի գլխավորած ապստամբությունը: Ներկայացման հինգերորդ արարում, երբ բեմից օպերայի հերոսներից մեկը կոչեց՝ «Ի զեն», դա հնչեց որպես ապստամբության ազդանշան: Ապստամբները ներկայացումից հետո գրավեցին Արդարադատության պալատը, հարձակվեցին նախարար Վան Մաանենի և հրատարակիչ Լիբրի-Բանյանոյի տների վրա և ավերեցին, հրդեհեցին պետական տպարանը, գրավեցին գինանոցը: Օգոստոսի 26-ի առավոտյան թագավորական զորքը կրակ բացեց ապստամբների վրա, մոտ 20 մարդ սպանվեց, մի քանիսը վիրավորվեցին: Օգոստոսի 26-27-ին Բրյուսելի քաղաքային իշխանությունները բնակչությանը հղած ուղերձում կոչ արեցին պահպանել հանդարտություն, իսկ տեղը ունեցածը որակեցին՝ դրսից եկած մարդկանց հրահրություն: Օգոստոսի 27-ին Բրյուսելում ամենուրեք հանեցին թագավորական գինանշանը և քաղաքապետարանի շենքի վրա ամրացրեցին Բրաբանտի եռագույն (սև, դեղին, կարմիր) դրոշը [28]:

Ղ. վրդ. Հովնանյանն իրավացիորեն գրում է, որ բրյուսելցիներին ուղղված առաջին ուղերձներում «Բելգիային Հոլանտայեն բաժնելուն վրա խոսք չկար, և շատերը կբաղձային ու կհուսային, որ իրենց արդար պահանջմանց կատարմամբն ամեն բան կարգի կդրվի»: Սակայն երկու կողմից կրքերը բորբոքվեցին, բելգիացիների «ակնկալությունը պարապի ելավ», ուստի հոլանդացիներին «մահու չափ ատող» ժողովուրդը մյուս քաղաքներում նույնպես «շփոթութիւններե հանեց[29]: Իսկապես, մի քանի օր անց ժողովրդական ապստամբությունները հաղթանակ տարան նաև Անտվերպենում, Լուվենում, Վերվյեում և այլ քաղաքներում: Պայքարի սկզբնական փուլում ապստամբները սոսկ պահանջում էին Բելգիային ինքնավարություն տալ, իսկ թագավորական զորքի կողմից Բրյուսելում արյուն հեղելուց հետո հանդես եկան առավել արմատական պահանջներով[30]:

Ղ. վրդ. Հովնանյանն օգոստոսի 25-ի իրադարձությունների մասնակիցներին անվանում է «խաժամուժ», քանի որ նրանք մայրաքաղաքում ավերածություններ կատարեցին: Նա բելգիացիներին չի հանդիմանում թագավորի իշխանության դեմ պայքար սկսելու համար, այլ ընդգծում է նրանց ատելությունը հոլանդացիների նկատմամբ և նշում, որ տարբեր քաղաքներից «մեծ բազմություն» էր գալիս Բրյուսել, «որպեսզի հոն տեղը հեղափոխության հաղթող ըլլալուն օգնեն»: Բրյուսելում սկսված շարժումը նա համարում է հեղափոխություն, որի մասնակիցները թագավորին առաջարկեցին բավարարել իրենց պահանջները, բայց մերժում ստացան: Վիլլեմ I-ը ապստամբներին պատասխանեց, որ այդ պահանջները «սահմանադրության դեմ են», ինքը նրանց

«սպառնալիքներեն չի վախնար», բայց թագաժառանգ Վիլլեմին ուղարկեց Բրյուսել՝ բանակցություններ վարելու: Նա բրյուսելցիներին խոստացավ միջնորդել իր հորը նրանց «բաղձանքները կատարելու համար»: Սեպտեմբերի 3-ին բրյուսելցիները թագաժառանգին առաջարկեցին, որ Բելգիան օրենսդրական և վարչական առումով Հոլանդիայից բաժանվի, երկու երկրներն ունենան առանձին խորհրդարան ու կառավարություն՝ մեկ թագավորի ենթակայությամբ[31]: Իրականում՝ սեպտեմբերի 1-ին Բրյուսելում թագաժառանգ Վիլլեմ Օրանացուն բելգիական շարժման ղեկավարներից Ալեքսանդր Ժանդեբյենը (1789-1869) չորսժամյա անպտուղ բանակցությունների վերջում առաջարկեց դառնալ Բելգիայի թագավոր, որից թագաժառանգը կտրուկ հրաժարվեց [32]:

Ղ. վրդ. Հովնանյանի պատմելով՝ թագավորը բելգիացիների առաջ քաշած պահանջի լուծումը թողեց սեպտեմբերի 15-ին Հաագայում բացված խորհրդարանին: Հոլանդացի պատգամավորները, չցանկանալով թագավորին տհաճություն պատճառել, հրաժարվեցին այդ հարցը քննարկել բելգիացի պատգամավորների ներկայությամբ: Դրանից հետո բելգիացիները, համախմբվելով Ֆրանսիայից եկած մարդկանց հետ, սկսեցին զինվել, ամբողջ «երկիրը սաստիկ գրգռութեան մէջ ընկավ»: Սեպտեմբերի 15-16-ին Լյուդտիխի «խաժամուժը» թագավորական զորքերի հետ ընդհարում ունեցավ: Նրանցից ոմանք սեպտեմբերի 20-ին գնացին Բրյուսել և տեղի «խաժամուժի» հետ միասին ազգային պահապաններին զինաթափեցին, զինանոցներն ու հասարակական շենքերը գրավեցին: Արքայազն Ֆրեդերիկը բրյուսելցիներին սեպտեմբերի 21-ին հայտնեց, որ մտնելու է մայրաքաղաք ու ցանկացած դիմադրություն սաստիկ պատժելու է: Ղ.վրդ. Հովնանյանը դա համարում է անխոհեմ քայլ, քանզի «ժողովրդեան կիրքերը սպառնալիքներով ավելի կսաստկանան, քան թե կհանդարտին»: Դրա վկայությունը նա համարում է այն, որ սեպտեմբերի 23-26-ը քաղաքի փողոցներում «սաստիկ արյունահեղ կռիվներ» ընթացան: Արքայազն Ֆրեդերիկը հարկադրված եղավ լքել Բրյուսելը, երբ իմացավ, որ տարբեր գավառներից զինված ժողովուրդ է գալիս դեպի մայրաքաղաք: Հավաստի ներկայացնելով սեպտեմբերի 23-26-ի իրադարձությունները Բրյուսելում[33]՝ Ղ. վրդ. Հովնանյանը շեշտում է, որ բելգիացիների պայքարը համաժողովրդական բնույթ էր կրում: Բոլոր գավառները ոտքի էին ելել և «անհնարին բազմութեամբ իր հայրենակցաց պաշտպանութեան կդիմեր», իսկ բելգիացի զինվորներն ամեն տեղ հոլանդացիներից «բաժանվել ու իրենց հայրենակցած կողմն անցած էին»[34]:

Ա. Գալֆայանը բելգիական ազգային պայքարը լուսաբանում է խիստ հակիրճ: Նրա պատմելով՝ սեպտեմբերին Բրյուսելում «խռովութիւն ելավ... Ուղղափառներն, որ երկար ատեն նոր աղանդից իշխանութեան տակ ընկճեր էին՝ Պելճիայի ազատասերներուն հետ միաբանած՝ իրեք օր սաստիկ պատերազմ ընելեն ետքը, իրենց երկիրը Օրանժի ցեղին տիրապետութենե ազատեցին, որով Պելճիան ալ զատ թագավորություն եղավ ինքնագլուխ» [35]: Ա. Գալֆայանը, ի տարբերություն Ղ. վրդ. Հովնանյանի, Բելգիայի իրադարձությունները գնահատում է որպես «խռովություն», բայց միաժամանակ ճիշտ է նկատում, որ դրա արդյունքում Բելգիան անկախ հռչակվեց:

Նույն դիրքորոշմանն է նաև պոլսահայ «Բանասերը», որը հրատարակման ժամանակ լիովին համապատասխանեց իր կոչմանը և ապագայի համար էլ արժեք ունեցավ[36]: Թերթը թեպետ բանասիրական ուղղություն ուներ, սակայն խմբագիրը՝ ազգային-պահպանողական հոսանքը ներկայացնող Հովհաննես Հիսարյանը (1827-1916), անդրադառնում էր նաև եվրոպական ազատագրական շարժումներին: Նրա գնահատմամբ՝ 1830թ. հուլիսյան «խռովությունը Եվրոպիոյ մեկ քանի տերութեանց վրա ներգործություն ունեցավ, որոնց գլխավորն է Պելճիոյ Հոլանտայեն բաժանումը» [37]:

Ղ. վրդ. Հովնանյանի հավաստի պատմելով՝ Նիդերլանդների խորհրդարանը, «հեղափոխութեան այսչափ առաջանալը տեսնելով», գնաց զիջման և սեպտեմբերի

29-ին որոշեց Բելգիան օրենսդրական և վարչական կարգով Հոլանդիայից անջատել: Սակայն «բանը բանեն անցած էր. բելգիացիք իրենց հաղթութեան վրա վստահացած ալ չէին ուզեր հաշտութեան խոսք լսել»: Հոլանդական զորքի Բրյուսելը լքելու օրը Լ. դը Պոտտերը ժամանակավոր կառավարություն ձևավորեց, իսկ հոկտեմբերի 5-ին «Բելգիայի անկախությունը հրատարակեց», սահմանադրություն մշակող հանձնաժողով ստեղծեց և որոշեց Բրյուսելում ազգային համաժողով հրավիրել:

Սեպտեմբերի 26-ին, Բրյուսելում ձևավորված թվով հինգերորդ ժամանակավոր կառավարությունը նույն օրը բելգիացիներին հղած ուղերձում կոչ արեց ոտքի ելնել և ազատագրվել ատելի տիրապետությունից: Երկու օր անց կառավարության կազմը համալրեց Ֆրանսիայից նոր վերադարձած Լ. դը Պոտտերը: Կառավարության անդամների մեծ մասը չափավոր գործիչներ էին, որոնք ոչ բոլոր հարցերում էին համախոհներ: Հոկտեմբերի 4-ին ժամանակավոր կառավարությունը հայտարարեց, որ Հոլանդիայից անջատված բելգիական գավառները հռչակվելու են անկախ պետություն: Այս հարցում կառավարության անդամները միասնական կարծիք չունեին: Լ. դը Պոտտերը հանրապետության կողմնակից էր, Վան դե Վեյերը (1802-1874) `սահմանափակ միապետության, իսկ Ա. ժանդեբյենը` Ֆրանսիայի հետ միավորման: Երկար քննարկումներից հետո որոշվեց ստեղծել սահմանադրություն մշակող հանձնաժողով և բոլոր վիճահարույց հարցերը թողնել մինչ Ազգային վեհաժողովի հրավիրումը [38]:

Ըստ Ղ.վրդ. Հովնանյանի` այս քայլերով ժամանակավոր կառավարությունը, մի կողմից պահպանում էր երկրի ներքին հանդարտությունը, մյուս կողմից` իրեն ապահովագրում էր եվրոպական պետությունների մոտ, որպեսզի նրանց համար «ընդունելի լինի Բելգիայի անկախությունը»: Նա իրատեսորեն վերլուծում և անաչառ գնահատական է տալիս հոլանդական իշխանությունների դիրքորոշմանը` սեպտեմբերի 29-ին Գլխավոր շտաբների կողմից Բելգիայի անկախության հռչակման կապակցությամբ: Բելգիական գավառները վերադարձնելու հույսը չկորցրած Վիլլեմ I-ը հոկտեմբերի 5-ին իր ավագ որդուն` արքայազն Վիլլեմ Օրանացուն, նշանակեց Բելգիայի կառավարիչ և իրեն հավատարիմ գավառներին զինվելու կոչ արեց: Նույն օրը բելգիացիներին հղած ուղերձում արքայազնը հավատացնում էր, որ Բելգիական կառավարությունը ձևավորվելու է միայն հարավային գավառներից, իսկ բոլոր գործերը ներկայացուցչական մարմիններում իրականացվելու է մարդկանց կողմից ընտրված լեզվով:

Ղ. վրդ. Հովնանյանի հավաստի պատմելով` Ազգային համաժողովի ընտրությունից հետո թագաժառանգ Վիլլեմը` որպես Բելգիայի խնամապետ, հոկտեմբերի 16-ին հայտարարեց, թե Բելգիան ընդունվում է «իբրև անկախ պետություն»: Բելգիացիները նրան չհավատացին, ուստի ժամանակավոր կառավարությունը հոկտեմբերի 18-ին պահանջեց, որ նա այսուհետև Բելգիայի «իրողությանց մեջ չխառնվի»[39]: Արքայազն Օրանացու` հոկտեմբերի 16-ի ուղերձը ևս մեկ փորձ էր պահպանել արքայատոհմի իշխանությունը բելգիական գավառներում: Նա ճանաչում էր Բելգիայի անկախությունը, պատրաստակամություն էր հայտնում գլխավորել նրանց ազգային շարժումը և ենթարկվել ընտրված ազգային վեհաժողովի որոշումներին: Հոկտեմբերի 25-ին Վիլլեմ I-ը նրա ուղերձը հայտարարեց անօրինական [40]:

1830թ. հոկտեմբերի սկզբներին բելգիական գավառների մեծ մասն ազատագրվեց հոլանդական զորքերից, քանի որ արքայազն Ֆրեդերիկի գլխավորած 10 հազար զորքը սեպտեմբերի վերջերին ապստամբների հետ ունեցած կռիվների ժամանակ ջախջախվեց: Վիլլեմ I-ը, չհաշտվելով Բելգիան կորցնելու մտքի հետ, 1830թ. հոկտեմբերին օգնության խնդրանքով դիմեց եվրոպական այն չորս երկրներին (Անգլիա, Ռուսաստան, Պրուսիա, Ավստրիա), որոնք 1815թ. Վիեննայի վեհաժողովում որոշում էին կայացրել Նիդերլանդական թագավորության կազմավորման մասին: Միջազգային դրությունը բարենպաստ էր Բելգիայի համար, քանի որ մեծ տերությունները, ելնելով իրենց ներքին խնդիրներից, չօգնեցին Նիդերլանդներին: 1830 թ. նոյեմբերի 2-ին Լոն-

դոնում բելգիական հարցով գագաթաժողովի մասնակից Անգլիան, Ռուսաստանը, Պրուսիան, Ավստրիան և Ֆրանսիան հակամարտող կողմերին առաջարկեցին դադարեցնել պատերազմական գործողությունները: Նրանք զինադադարը ցանկանում էին օգտագործել Բելգիայի ինքնավարության հարցը լուծելու համար, որին միակ դեմը Ֆրանսիան էր: Վերջինիս ներկայացուցիչ Շարլ Մորիս Թալերյանը (1754-1838) առաջնահերթ խնդիր էր համարում Նիդերլանդական թագավորության վերացումը: Քառյակ պետությունների դիրքորոշումը նպաստեց, որ Բելգիան ձեռնամուխ լինի իր անկախության գործընթացը մինչև վերջ հասցնելուն[41]:

Ղ. վրդ. Հովնանյանի դիտարկմամբ՝ մինչ եվրոպական մեծ տերությունները դիվանագիտական քննարկումների մեջ էին, բելգիացիները գրեթե ամբողջ երկիրը «հոլանդացիներեն մաքրելեն ետև», 1830 թ. նոյեմբերի 10-ին, Բրյուսելում, ազգային համաժողով հրավիրեցին, որը բացեց ժամանակավոր կառավարության ղեկավար Լ. դը Պոտտերը: Համաժողովում Բելգիայի ապագայի վերաբերյալ երեք կարծիք կար՝ միանալ Ֆրանսիայի հետ, հանրապետություն հռչակել և սահմանադրական միապետություն հաստատել: Ղ. վրդ. Հովնանյանի պատմելով՝ պատգամավորների մեծամասնությունը հասկանում էր, որ եվրոպական մեծ տերությունները թույլ չեն տա Բելգիան հանրապետություն հռչակել, Ֆրանսիային միանալը «խոհեմութիւնը թող չտար», ուստի նոյեմբերի 18-ին միահամուռ հռչակեցին Բելգիայի անկախությունը, իսկ նոյեմբերի 22-ին որոշեցին, որ «նույն անկախ տերությունը միապետություն ըլլա» [42]:

Ղ. վրդ. Հովնանյանը ճիշտ է ներկայացնում Բելգիան սահմանադրական միապետություն հռչակելը, երբ համաժողովը 158՝ կողմ և 38՝ դեմ ձայներով որոշեց Բելգիայում վերացնել Օրանյան արքայատոհմի իշխանությունը և երկիրը հռչակել սահմանադրական միապետություն[43]: Ղ.վրդ. Հովնանյանն անկողմնակալ դիրքերից վերլուծում է մեծ տերությունների դիրքորոշումը բելգիական հարցի կապակցությամբ: Նա գրում է, որ Բելգիայում տեղի ունեցած հեղափոխությունը եվրոպական պետությունների համար «ծանրակշռություն» ունեցավ և Վիեննայի վեհաժողովի «որոշումներին ու օրինականութեան սկզբունքին հակառակ էր»: Բելգիացիներին ամենևին չհանդիմանելով ապստամբության համար՝ Ղ. վրդ. Հովնանյանը նկատում է, որ եվրոպական պետությունները ցանկացած «նկատում կամ հայեցում» մի կողմ դրեցին, որպեսզի հուլիսյան հեղափոխության «դյուցազունների» և բելգիացիների «միությունը խափանեն»: Այդ նպատակով եվրոպական դիվանագիտությունը «մեծ գործունեություն բանեցուց»[44]: Ղ. վրդ. Հովնանյանի պատմելով՝դեկտեմբերի 20-ին, Լոնդոնում, եվրոպական հինգ պետությունները ճանաչեցին Բելգիայի անկախությունը, Վիլլեմ I-ին գահից զրկելը և որոշեցին Բելգիայի ու Հոլանդիայի սահմանները: 1831թ. հունվարին որոշվեց, որ Հոլանդիան վերականգնվում է 1790թ. սահմաններում, իսկ Բելգիան պետք է վճարի նախկին Նիդերլանդական թագավորության պետական պարտքի կեսը: Այս որոշումից Վիլլեմ I-ը գոհ մնաց, իսկ բելգիական Ազգային համաժողովը 1831թ. փետրվարի 1-ին մեծ տերություններին բողոք ներկայացրեց՝ միաժամանակ ձեռնամուխ լինելով թագավորի ընտրությանը: Երեք հիմնական թեկնածուներից համաժողովը նախապատվություն տվեց Ֆրանսիայի թագավորի որդուն՝ Նեմուրի դքսին՝ Լուի Շարլ Օռլեանցուն (1814-1896) և փետրվարի 3-ին նրան միապետ ընտրեց: Բայց այդ ընտրությանը դեմ էին եվրոպական բոլոր պետությունները և Լուի Ֆիլիպը, թեպետ, նա իր որդուն թագավոր ընտրելու գլխավոր նախաձեռնողն էր[45]:

Ղ. վրդ. Հովնանյանը հավաստի ներկայացնում է բելգիական խորհրդարանի 1831թ. փետրվարի 1-ի բողոքը[46], Լոնդոնի գագաթնաժողովում մեծ տերությունների դիրքորոշումը Բելգիայի անկախության հռչակման և Ազգային համաժողովում թագավորի ընտրության հարցում: Լուի Ֆիլլիպը Փարիզ մեկնած բելգիական պատվիրակությանը համաձայնություն չտվեց, որ իր որդին ստանձնի Բելգիայի գահը՝ վկայակոչելով իրենց ժառանգների համար գահ ապահովելու Լուի XIV-ի և Նապոլեոն Բոնապարտի

կործանարար փորձը[47]: Ղ. վրդ. Հովնանյանի կարծիքով Ֆրանսիայի թագավոր Լուի Ֆիլիպը երկու ճանապարհ ուներ. կամ պիտի ազատականներին սատարեր ու Բելգիան միացներ Ֆրանսիային, կամ էլ եվրոպական մյուս պետությունների հետ «միաբանելով և Ֆրանսիայում հեղափոխական տարրը զսպելով»՝ նպաստեր նրանցից բխող մյուս հեղափոխությունների ճնշմանը: Նա ընտրեց երկրորդ ճանապարհը և մեծ տերություններին խոստացավ Բելգիան չմիավորել Ֆրանսիային ու թույլ չտալ այնտեղ հանրապետության հռչակումը[48]:

Ըստ Ղ. վրդ. Հովնանյանի՝ մեծ տերությունների կողմից Բելգիայի «անկախությունը դյուրավ ճանաչելուն այս գլխավոր շարժառիթեն զատ, յուրաքանչյուր տերություն առանձին պատճառներ ալ ուներ»: Անգլիան ցանկանում էր Բելգիային և Հոլանդիային հակադրել Ֆրանսիային, որպեսզի նա չուժեղանա: Պրուսիան վախենում էր Հռենոսյան գավառներում հեղափոխության տարածումից: Ավստրիան վախ ուներ իր իտալական և լեհական գավառներից: Ռուսաստանը ետ կանգնեց Հոլանդիային օգնելու մտադրությունից՝ 1830թ. նոյեմբերին բռնկված լեհական ապստամբության պատճառով[49]:

Ճիշտ բացահայտելով մեծ պետությունների՝ Բելգիայի անկախության հետ հաշտվելու պատճառները[50], Ղ. վրդ. Հովնանյանն այնուհետև պատմում է, որ 1831թ. փետրվարի 17-ին Լուի Ֆիլիպից մերժում ստանալով, բելգիացիների Ազգային համաժողովը փետրվարի 24-ին Բելգիայի խնամապետ անվանեց Սյուրլիե դե Շոքյեին (1769-1839), ով «հարուստ երկրատեր էր և խիստ չափավոր կարծեաց տեր»[51]: Նա նկատի ունի Բելգիայի Ազգային համաժողովի նախագահ Ս. դե Շոքյեին, ով, Լուի Ֆիլիպի մերժումից հետո, համաժողովի որոշմամբ նշանակվեց Բելգիայի ժամանակավոր փոխանորդ՝ մինչև նոր թագավորի ընտրությունը [52]:

Ղ. վրդ. Հովնանյանը գրում է, որ դրանից հետո Անգլիան Բելգիայի համաժողովին 1831թ. հունիսի 4-ին «սպառնալիքով բռնադատեցաւ» թագավոր ընտրել Լեոպոլդ Սաքսեն-Կոբուրգցի (1790/1831-1865) իշխանին: Նա Անգլիայի թագուհու ազգականն էր ու մինչ այդ հրաժարվել էր իրեն առաջարկված Հունաստանի թագից, ինչին Ղ. վրդ. Հովնանյանը քաջատեղյակ էր: Նա գրում է, որ թագաժառանգ Վիլլեմը Լոնդոնում շատ ջանք թափեց Լեոպոլդի՝ թագավոր դառնալը ծախողելու և անձամբ թագավոր դառնալու համար, բայց արդյունքի չհասավ ու ծեռնունայն վերադարձավ Հոլանդիա[53]:

Ղ. վրդ. Հովնանյանը ճիշտ է ներկայացնում 1831թ. հունվարի 20-ի և 27-ի՝ Լոնդոնի գագաթնաժողովի արձանագրություններից Վիլլեմ I-ի գոհ լինելը և Բելգիական Ազգային համաժողովի արդարացի դժգոհությունը: 1831 թ. մայիսի 10-ին Լոնդոնի գագաթաժողովը բելգիացիներին վերջնագիր ներկայացրեց՝ առաջարկած պայմանները ընդունելու համար: Անգլիան պահը հարմար գտնելով՝ բելգիացիներին որպես թագավոր առաջարկեց արքայազն Լեոպոլդ Սաքսեն Կոբուրգցուն: Մայիսի 21-ին Անգլիայի արտաքին գործերի նախարար լորդ Պալմերթսոնի (1784-1865) առաջարկությամբ գագաթնաժողովը նոր որոշում ընդունեց Բելգիայի օգտին: Այդ որոշմամբ, եթե բելգիացիները Լեոպոլդին թագավոր ընտրեին, ապա հինգ պետությունները պարտավորվում էին Վիլլեմ I-ի հետ բանակցություններ սկսել Լյուքսեմբուրգի մեծ դքսությունը Բելգիային հանձնելու հարցով: Բելգիացիները դրան համաձայնեցին և հունիսի 4-ին Ազգային համաժողովում ձայների ահռելի մեծամասնությամբ Լեոպոլդին թագավոր ընտրեցին[54]: Այնպես որ, Անգլիան դրան հասավ դիվանագիտական ճանապարհով և ոչ թե սպառնալիքով, ինչպես գրում է Ղ. վրդ. Հովնանյանը:

Ա. վրդ. Գալֆայանը բավարարվում է տեղեկացնելով, որ Բելգիայի ազգային ժողովը թագավոր ընտրեց Ֆրանսիայի թագավորի որդի Նեմուրի դքսին, բայց երբ նա չհամաձայնվեց, ժողովը «թագավոր ընտրեց Սաքս-Քոպուրկի Լեոփոլտ իշխանը»[55]: Գ. Գովրիկյանը իրավացիորեն հավաստում է «Անգլիայի ազդեցությամբ» Լեոպոլդ իշխանի թագավոր ընտրվելը[56]:

Գրիգոր Արծրունին, չխորանալով մանրամասնությունների մեջ, փաստում է. վալոնների և ֆլամանդրիացիների «երկպառակության հետևանքն այն էր, որ պետության մի մասը բաժանվեցավ և կազմեց մի անկախ պետություն Բելգիա անունով» [57]:

Ղ. վրդ. Հովնանյանը հանգամանորեն ներկայացնում է Լոնդոնի գագաթնաժողովի մասնակից պետությունների 1831թ. հունիսի 27-ի արձանագրությունը, որի 18 հոդվածները «խիստ նպաստավոր պայմաններ կբովանդակեր» բելգիացիների համար: Նա գրում է, որ նոր պայմաններով Բելգիան ազատվում էր Հոլանդիայի պարտքի մի մասը վճարելուց, ստանում էր Մաաստրիխտ քաղաքը, Հոլանդիայից պահանջում էր դուրս գալ Անտվերպենից, Լյուքսեմբուրգը պահպանում էր իր նախկին կարգավիճակը[58]:

Լորդ Պալմերթսոնի ջանքերով ընդունված 18 հոդվածներով Լյուքսեմբուրգի դքսությունը ձևականորեն դուրս չէր բերվում Բելգիայի կազմից, բայց հստակ վերադարձնում էր Մաաստրիխտը, որը չէր մտնում Հոլանդիայի՝ 1790թ. սահմանների մեջ: Որոշակիորեն կարգավորվում էին գետային նավարկության և առևտրական հարցերը, թեթևանում էր Հոլանդիայի արտաքին պարտքի վճարումը Բելգիայի համար[59]: Ըստ Ղ. վրդ. Հովնանյանի՝ այս հոդվածների դեմ Վիլլեմ I-ը և Հոլանդիայի ազգային ժողովը «սաստիկ կերպով բողոքեցին», բայց դա ամենևին չխանգարեց, որ Լեոպոլդը հուլիսի 21-ին ժամանի Բրյուսել, և նոր ընդունված «սահմանադրությունը պահելու երդում» տալով, անցնի գահին: «Իր հպատակաց սիրտը շահելու համար» նա սկսեց շրջագայել երկրում՝ ամենուրեք արժանանալով հարգանքի և «ցնծութեան հանդեսների»: Ըստ Ղ. վրդ. Հովնանյանի՝ այնպիսի տպավորություն էր, որ «բովանդակ երկիրը հարսանիք կը կատարէ»: Համընդհանուր ոգևորության պայմաններում Ազգային համաժողովը հուլիսի 9-ին ծայների ճնշող մեծամասնությամբ հաստատեց Լոնդոնի արձանագրության 18 հոդվածները, որը Բելգիային խաղաղություն էր բերում: Բայց բելգիացիների համընդհանուր ոգևորությունը կարճ տևեց: Ղ. վրդ. Հովնանյանի պատմելով՝ 1831թ. օգոստոսի 1-ին «կայծակի հարվածի պես բելգիացիները սարսափեցուց զարհուրելի գույժը՝ թե բազմաթիվ հոլանդական բանակը սահմաններեն անցած է»: Վիլլեմ I-ը, չընդունելով 18 հոդվածները, գաղտնի պատերազմական նախապատրաստություն էր տեսնում և իր զորքը՝ հինգ գնդերի բաժանած, արքայազն Վիլլեմ Օրանացու գլխավորությամբ Բելգիա մտցրեց: Բելգիական բանակը, Ղ. վրդ. Հովնանյանի գնահատմամբ, «ողորմելի վիճակի մեջ» էր գտնվում, ուստի օգոստոսին մի քանի պարտություններ կրեց: Բելգիացիներին օգնության հասավ ֆրանսիական 50 հազարանոց զորքը՝ մարշալ ժերարի գլխավորությամբ, և Հադրինգտոնի գլխավորած անգլիական նավատորմը: Հոլանդական զորքը խուսափեց նրանց հետ պատերազմելուց և 1831թ. օգոստոսի 31-ին զինադադար կնքեց ու հեռացավ Բելգիայից[60]:

Ա. Գալֆայանի պատմելով, երբ հոլանդացիները Բելգիա ներխուժեցին, ֆրանսիական 50 հազար զորքը մտավ Բելգիա և այնտեղից հոլանդացիներին դուրս մղեց [61]: Գ. վրդ. Գովրիկյանը գրում է, որ Հոլանդիան Լոնդոնի գագաթնաժողովի ընդունած խաղաղության պայմանները մերժեց և արքայազն Օրանացու հրամանատարությամբ զորք մտցրեց Բելգիա: Արքայազնը Բելգիայում մի քանի հաղթանակ տարավ ու խորացավ երկրի ներսում, բայց ֆրանսիական բանակի՝ Բելգիա մտնելուն պես «հարկադրեցավ ետ քաշուիլ»[62]:

Մխիթարյան միաբանության պատմաբանները հավաստի, անկողմնակալ և անաչառ են ներկայացնում Բելգիայում 1831թ. ընթացած պատերազմական գործողությունները: Ֆրանսիայի ծրագրերի մեջ չէր մտնում նորաստեղծ բելգիական թագավորության կործանումը, ուստի վարչապետ Կազիմիր Պերյեն (1777-1832) Լեոպոլդ թագավորի առաջին իսկ խնդրանքով, իր անմիջական նախաձեռնությամբ 50 հազար զորք ուղարկեց Բելգիա: Ֆրանսիական Հյուսիսային բանակի հրամանատար, նապոլեոնյան մարշալ Էտյեն-Մորիս ժերարը (1773-1852) սրընթաց արշավելով, օգոստոսի 12-ին մտավ Բրյուսել: Հոլանդացիներն առանց մի կրակոց արձակելու, օգոստոսի 20-ին ետ քաշվե-

ցին իրենց տարածքը[63]: Այս ամենին քաջատեղյակ Ղ. վրդ. Հովնանյանը գրում է, որ Վիլլեմ Օրանացու զինադադար կնքելուց և Բելգիայից դուրս գալուց հետո եվրոպական չորս տերությունները դժգոհ մնացին Բելգիայում՝ Ֆրանսիայի ռազմական միջամտությունից:

Ղ. վրդ. Հովնանյանի ճշմարիտ պատմելով՝ մեծ տերությունները Լոնդոնում 1831թ. հոկտեմբերի 15-ին 24 հոդվածից կազմված նոր արձանագրություն ստորագրեցին: Այն նպաստավոր էր Հոլանդիայի համար, որովհետև զիջում էր Լյուքսեմբուրգի և Լիմբուրգի մի մասը միայն, իսկ Բելգիան Հոլանդիայի պարտքը փակելու համար տարեկան պետք է հատկացներ 8.4 մլն. ֆլորին: Այս փոփոխությունները Բելգիան դժկամորեն ընդունեց, բայց հարկադրված եղավ ստորագրել նոր պայմանագիրը: Ռուսաստանը, Պրուսիան և Ավստրիան 1832թ. մայիսի 4-ին վավերացրին նոր հոդվածները[64]:

Ղ. վրդ. Հովնանյանը հավաստի է ներկայացնում լոնդոնյան նոր պայմանագիրը, որը ստեղծված իրադրությունում առավել շահավետ էր Հոլանդիայի համար: Լոնդոնի գագաթնաժողովը բելգիական Ազգային համաժողովին 5 պարտադիր պայման առաջարկեց պայմանագրի կատարման համար: Ժողովի նախագահ Վան դեր Վեյերը նոյեմբերի 15-ին Լոնդոնում ստորագրեց նոր պայմանագիրը, որը բելգիացիներին երաշխավորում էր 24 հոդվածների կատարումը: Բայց Վիլլեմ I Օրանացին հրաժարվեց Հոլանդիայի անունից ստորագրել պայմանագիրը[65]: 1832թ. հոկտեմբերին Անգլիան և Ֆրանսիան, դաշինք կազմելով, Վիլհելմ I-ից պահանջեցին ճանաչել նոր հոդվածները և մերժում ստանալով՝ զորքեր մտցրին Բելգիա: Ա. վրդ. Գալաֆյանի համառոտ պատմելով՝ Լուի Ֆիլիպի երկու որդիները մարշալ ժերարի գլխավորությամբ պաշարեցին Անտվերպենը, գրավեցին և հանձնեցին Բելգիայի թագավորին, որը հավաստում է նաև Գ. Գովրիկյանը[66]: Ղ. վրդ. Հովնանյանի պատմելով նոյեմբեր-դեկտեմբերին անգլո-ֆրանսիական զորքերը մի շարք հաղթանակներ տարան, որից հետո Վիլհելմ I-ը հարկադրված եղավ 1833թ. մայիսի 21-ին անգլո-ֆրանսիական «պահանջներն ընդունել»: Նրանով «բոլոր թշնամություններուն վերջ տրվեցավ..., ծովեզերաց պաշարումը վերացավ», երկու կողմերի սահմանները թողնվեցին անփոփոխ, մինչև հետագայում «երկրորդական խնդիրների հետ կատարեալ կարգի դրուիլը»[67]:

Սրանով ավարտվեց բելգիական ժողովրդի անկախության համար պայքարը, որը նրանց հաջողություն բերեց շնորհիվ Ֆրանսիայի և Անգլիայի միջամտության, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի չեզոքության: Մեծ տերությունների համար «Բելգիայի անկախությունն ընդունելի էր, ուստի նրանք հավանություն տվեցին այնտեղ իդեալական սահմանադրական միապետություն հաստատելուն»[68]: Նիդերլանդների թագավորը պարտավորվեց հարգել նոր պետության չեզոքությունը, որի մասին անմիջական պայմանագիր պիտի կնքեր Բելգիայի հետ: Վիլլեմ I-ը պայմանագիրը կնքեց միայն հինգ տարի անց՝ 1838թ., բայց փաստացի Բելգիան 1833թ. մայիսի 21-ի ակտից հետո իր նախկին տիրակալի կողմից այլևս չէր ենթարկվում որևէ ոտնձգության[69]:

Հայ հասարակական մտքի համար բելգիական ազգային պայքարը, հատկապես Մխիթարյան միաբանության պատմաբանների կողմից, լուսաբանելը կարևոր է ամենից առաջ նրանով, որ նրանք կառչած չեն մնացել իրենց գաղափարախոսական կռվաններին ու աշխարհայացքին: Մխիթարյաններն, առհասարակ, եվրոպական հեղափոխական պայքարը դատապարտում էին և հանդես էին գալիս Եվրոպայում առկա քաղաքական հավասարակշռության, գոյություն ունեցող միապետությունների պահպանման ու եվրոպական անվտանգությունը փորձության չտանելու օգտին: Ղուկաս Ինճիճյանը, մասնավորապես, իր աշխատություններում և պարբերականներում ընդգծված բացասական վերաբերմունք է դրսևորում XVIII դարի ֆրանսիական հեղափոխության, իսկ Ամբրոսիոս Գալֆայանը, Պողոս և Ղևոնդ Հովնանյաններն ու Գրիգոր Գովրիկյանը՝ XIX դարի առաջին կեսի եվրոպական հեղափոխությունների նկատմամբ: Նրանք հեղափոխականներին անվանում էին «խռովարարներ» ու «խաժամուժ»,

որոնք խախտում են եվրոպական անդորրն ու հավասարակշռությունը: Ժամանակի արևմտաեվրոպական պատմագրության գնահատականով Մխիթարյանները Բելգիայում տեղի ունեցած ազգային-ազատագրական պայքարը համարում են հեղափոխություն, որը մեծամասամբ ներկայացնում են անկողմնակալ դիրքերից և բավականաչափ հավաստի՝ ամենևին չդատապարտելով պայքարի ելած ժողովրդին:

Դրանում կարևոր դեր է խաղացել ամենից առաջ այն հանգամանքը, որ բելգիացիների պայքարն անմիջականորեն չէր առնչվում ավստրիական կայսրության քաղաքական շահերի հետ: Այս առումով Հաբսբուրգների կայսրությունում ապրող և ստեղծագործող Մխիթարյանները որևէ պարտավորվածություն չունեին, կաշկանդված չէին, ուստի բելգիական պայքարն իրենց աշխատություններում շարադրում են հավաստի ու հիմնականում անաչառ:

Բելգիական ազգային պայքարը, որը սկզբնական շրջանում, իսկապես, հեղափոխական տարրեր էր պարունակում իր մեջ, ուղենիշային կարևորություն ձեռք չբերեց անկախության ձգտող մյուս ժողովուրդների համար: Այն ընթացավ 1830թ. ֆրանսիական հեղափոխության անմիջական ազդեցության տակ և բախտորոշ դարձավ միայն բելգիական ժողովրդի համար: Բացի այդ, XIX դարի առաջին կեսում Բելգիայում կազմավորված հայկական գաղութ չկար, որի ճակատագիրը հեղափոխական պայքարի հորձանուտում կարող էր անհանգստացնել ինչպես Մխիթարյան միաբանության գործիչներին, այնպես էլ հայ հասարակական մտքի ներկայացուցիչներին: XV դարում հայերի թիվը Բելգիայում խիստ նվազեց: Նրանք կրկին Բելգիայում՝ այն էլ միայն Բրյուսելում և Անտվերպենում, հաստատվեցին XIX դարի վերջին: Սա նույնպես պայմանավորեց, որ հայ հասարակական միտքն առանձնապես շատ չկարևորի բելգիական պայքարը: Եվ, վերջապես, բելգիական պայքարն ընդհանրություն չուներ արևմտահայության ազատագրական շարժումների հետ: Այն երբևէ հայության ազատագրական ծրագրերում տեղ չգտավ:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գալէմքէարեան Գ. Պատմութիւն հայ լրագրութեան, Վիեննա, 1893, էջ 38:
2. Տե՛ս Հ. Պողոս վ. Հովնանեան. Պատմութիւն Իտալիայի ի սկզբանէ մինչև մեր օրերը, Վիեննա, 1864, նույնի՝ Պատմութիւն տիեզերական ժողովոց եկեղեցւոյ, Վիեննա, 1847, Հ. Ղևոնդ վ. Հովնանեան. Պատմութիւն քաղաքականութեան եվրոպական տերութեանց ընդհանրապես, Վիեննա, հ. Ա-Դ, 1857, 1860, Հ. Հովսեփ վ. Գաթըրճեան. Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհիս մինչև ցմեր ժամանակս, հ. 1-2, Վիեննա, 1849-1852, Հ. Եփրեմ Չագլճեան. Պատմութիւն հայոց, Վիեննա, 1851, Անտոն Մատաթիա Գարագաշեան. Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան, Կ.Պոլիս, 1868, Հ. Գրիգոր վ. Գավրիկեան. Ընդհանուր պատմութիւն համառօտ, Վիեննա, 1879:
3. Հ. Գրիգորի վ. Գալեմքէարեան, նշվ. աշխ., էջ 99:
4. «Եվրոպա», Վիեննա, 1848, 27 հունիսի, թիվ 26, էջ 112:
5. Հ. Գրիգորի վ. Գալեմքէարեան, նշվ. աշխ., էջ 100:
6. «Բազմավեպ», Վենետիկ, 1848, 1 մայիսի, էջ 141:
7. Ա. Երիցեան. Վենետիկի Մխիթարեանք, Թիֆլիզ, 1883, էջ 131:
8. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, Վիեննա, 1860, էջ 15-16, 131:
9. См: Л. А. Зак. Монархи против народов, стр. 291; А. Дебидур. Дипломатическая история Европы 1814-1878, Ростов-на Дону, 1995, том I, стр. 32, 74-75.
10. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 131:

11. «Մշակ», Թիֆլիզ,1872, 16 մարտի, թիվ 11, էջ 3:
12. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 132:
13. Տե՛ս А. С. Намазова. Бельгийская революция 1830 года. М., 1979, стр. 48-50.
14. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան նշվ. աշխ., էջ 132:
15. Տե՛ս А. С. Намазова. Указ. соч., стр. 30-40.
16. Նույն տեղում, էջ 59:
17. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 132-133:
18. Տե՛ս А. С. Намазова. Указ. соч., стр. 54-56.
19. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., էջ 134-135:
20. А. С. Намазова. Указ. соч., стр. 57-58.
21. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 135-136:
22. Հ. Գրիգոր վ. Գովրիկեան, Ընդհանուր պատմութիւն համառօտ, Վիեննա, 1879, էջ 283:
23. Տե՛ս Ա. Գալֆայեան. Համառօտութիւն ժամանակակից պատմութեան, Վենետիկ, 1851, էջ 225:
24. Մ. Մամուրյան, Երկեր, Երևան, 1966, էջ 137:
25. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., էջ 136:
26. А. С. Намазова. Указ. соч., стр. 56.
27. Ղ. վրդ. Հովնանեան, նշվ. աշխ., էջ 137:
28. А. С. Намазова. Указ. соч., стр. 61-66.
29. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 136-137:
30. А. Дебидур. Указ. соч., том I, стр. 267; А. С. Намазова. Указ. соч., стр. 69-71.
31. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., էջ138:
32. А. С. Намазова. Указ. соч., стр. 72.
33. А. С. Намазова. Указ. соч., стр. 86-88; А. Дебидур. Указ. соч., том I, стр. 267.
34. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 138-140:
35. Հ. Ամբրոսիոս վ. Գալֆաեան, նշվ. աշխ., էջ 127:
36. Հ. Գրիգորի վ. Գալէմքէրեան, նշվ. աշխ., էջ 124:
37. «Բանասեր», 1851, հունվար, թիվ 1, էջ 44:
38. Տես А. С. Намазова. Указ. соч., стр. 91-94.
39. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 140-141:
40. А. С. Намазова. Указ. соч., стр. 100-101.
41. А. С. Намазова. Указ. соч., стр. 111-126; А. Дебидур. Указ. соч., том I, стр. 268-270.
42. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 142-143:
43. А. С. Намазова. Указ. соч., стр. 128.
44. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 157:
45. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 159-160:
46. Տես С. Г. Лозинский. История Бельгии и Голандии в новое времия. СПб, 1907, стр. 153.
47. Տես А. С. Намазова. Указ. соч., с. 128-135; А. Дебидур. Указ. соч., том I, стр. 227.
48. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 157:
49. Նույն տեղում, էջ 157-158:
50. А. Дебидур. Указ. соч., том I, стр. 268-269; Всемирная история. Под ред. Н. А. Смирнова, том VI, М., 1959, стр. 221.
51. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 142-160:
52. А. С. Намазова. Указ. соч., стр. 135.
53. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 159-160:

54. Տե՛ս А. Дебидур. Указ. соч., том I, стр. 280-281; А. С. Намазова. Указ. соч., стр. 142.
55. Հ. Ամբրոսիոս վ. Գալֆաեան, նշվ. աշխ., էջ 218:
56. Հ. Գրիգոր վ. Գովրիկեան, նշվ. աշխ., էջ 283:
57. «Մշակ», 1872, 16 մարտի, թիվ 11, էջ 3:
58. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 161:
59. А. Дебидур. Указ. соч., том I, стр. 281; История дипломатии, том I, стр. 552; А. С. Намазова. Указ. соч., стр. 146.
60. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 162-163:
61. Հ. Ամբրոսիոս վ. Գալֆաեան, նշվ. աշխ., էջ 218:
62. Հ. Գրիգոր վ. Գովրիկեան, նշվ. աշխ., էջ 283:
63. А. Дебидур. Указ. соч., том I, стр. 285; А. С. Намазова. Указ. соч., стр. 150-151.
64. Տե՛ս Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 164-165:
65. А. Дебидур. Указ. соч., том I, стр. 285 - 287; А. С. Намазова. Указ. соч., стр. 152-153.
66. Հ. Ամբրոսիոս վ. Գալֆաեան, նշվ. աշխ., էջ 219-220, Հ. Գրիգոր վ. Գովրիկեան, նշվ. աշխ., էջ 283:
67. Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, նշվ. աշխ., հ. Դ, էջ 165-166:
68. Норман Дэвис. История Европы. Пер. с англ., М., 2007, стр. 593.
69. А. Дебидур. Указ. соч., том I, стр. 285-286, 293-297.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայ հասարակական միտքը 1830-ական թթ. բելգիական ազատագրական պայքարի մասին

Ֆելիքս Մովսիսյան

1830-ական թվականների բելգիական ազատագրական պայքարը որոշակի արձագանք է գտել XIX դարի հայ հասարակական մտքում: Դրան եվրոպական երկրների պատմությանը նվիրված իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են հիմնականում Մխիթարյան միաբանության անդամները՝ պատմաբաններ Ղևոնդ վարդապետ Հովնանյանը, Ամբրոսիոս վարդապետ Գալֆայանը, Գրիգոր վարդապետ Գովրիկյանը: Մխիթարյանները իրազեկ էին բելգիական պայքարի դրդապատճառներին և հետապնդած նպատակին, որը ներկայացնում են բավական հավաստի, «եվրոպական ոճով և հմտությամբ: Հայ ազգային պահպանողական հոսանքը ներկայացնող այս պատմաբանները ճիշտ են ընկալում բելգիական պայքարի ազատագրական բնույթը: Ինքնուրույն բելգիական թագավորության հռչակումը նրանք վերագրում են ոչ միայն բելգիացիների պայքարին, այլև ստեղծված միջազգային բարենպաստ պայմաններին ու մեծ տերությունների քաղաքականությանը: Արևելահայ լիբերալ հոսանքի պարագլուխ Գրիգոր Արծրունին և արևմտահայ դեմոկրատ գործիչ,հրապարակախոս Մատթեոս Մամուրյանն իրենց հրապարակումներում կարևորում են անկախության ձգտող բելգիացիների պայքարը, Բելգիական թագավորության հռչակումը Եվրոպայի քաղաքական կյանքում:

РЕЗЮМЕ

Армянская общественная мысль о бельгийской освободительной борьбе 1830-х годов

Феликс Мовсисян

Ключевые слова: независимость, борьба, победа, временное правительство, крупнейшие державы, королевство, конгрегация Мхитаристов.

Бельгийская освободительная борьба 1830-х годов нашла определенное отражение в армянской общественной мысли XIX века. К ней обращались в своих работах, посвященных истории европейских стран, в основном, представители конгрегации Мхитаристов: историки Гевонд архимандрит Овнанян, Амбросиос архимандрит Галфаян, Григор архимандрит Говрикян.

Мхитаристы были осведомлены о причинах и целях бельгийской борьбы, которую представляли достоверно, «в европейском стиле и мастерством». Эти историки, представляющие армянское национальное консервативное течение, правильно воспринимали освободительный характер бельгийской борьбы. Провозглашение самостоятельного бельгийского королевства они связывали не только с борьбой бельгийцев, но и со сложившимися благоприятными международными условиями и политикой крупнейших держав.

Лидер восточно-армянского либерального течения Григор Арцруни и западно-армянский демократический деятель, публицист Матеос Мамурян в своих публикациях подчеркивали важность борьбы бельгийцев, стремящихся к независимости, и провозглашения Бельгийского королевства в политической жизни Европы.

SUMMARY

Armenian Public Thought on the 1830s Belgian Liberation Struggle

Feliks Movsisyan

Key words: independence, struggle, victory, interim government, great powers, kingdom, the Mekhitarist Congregation.

The Belgian liberation struggle of the 1830s found a certain response in the Armenian public mind of the 19th century. The members of the Mekhitarist Congregation, historians Archimandrite Jond Hovnanyan, Archimandrite Ambrosios Galfayan, Archimandrite Grigor Govrikyan, referred to it in their studies on the history of European countries. The Mekhitarists were aware of the motives of the Belgian struggle and the goal they pursued, which they presented with a rather reliable, "European-style and skill”. These historians representing the Armenian national conservative current correctly understand the liberation nature of the Belgian struggle. They attribute the proclamation of the independent Belgian Kingdom not only to the struggle of the Belgians, but also to the favorable international conditions and the policy of the great powers. Grigor Artsruni, the ringleader of the Eastern Armenian Liberal Power and Western Armenian democrat, public speaker Matteos Mamuryan in their publications emphasize the struggle of the Belgians striving for independence, the proclamation of the Kingdom of Belgium in the political life of Europe.